ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՎԵՐԻՆ և ՍՏՈՐԻՆ ՎԵՐՋՈՒՅԹՆԵՐԻ ՊՐՈԹԵԶՆԵՐԻ ՎԵՐԱՆՈՐՈԳՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
N ԱՍՀՆ-ԳՀԾՁԲ-20/12

ք. Երևան «09» մարտի 2020 թ.

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը, ի դեմս գլխավոր քարտուղարի պարտականությունները կատարող Ս.Մաչյանի, որը գործում է նախարարության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «Ինտերօրթո» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Ա.Պետրոսյանի, որը գործում է կազմակերպության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է վերին և ստորին վերջույթների պրոթեզների վերանորոգման ծառայությունների մատուցման պարտավորությունը (այսուհետ՝ ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ֆանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող ծառայություն.

ա) Չընդունել ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ծառայությունը պայմանագրին համապատասխանող ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված ծառայության արդյունքը, իսկ ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել ծառայության մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Որակավորման և պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Մատուցված ծառայությունն ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ծառայության մատուցման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող

փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Կատարողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

3.2 Եթե մատուցված ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 3.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

3.3 Եթե մատուցված ծառայությունը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 3.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.4 Եթե պայմանագրի 3.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում մատուցված ծառայությունը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատուցված ծառայությունը համարվում է ընդունված և պայմանագրի 3.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա ծառայության գինը կազմում է 8 100 000 (Ութ միլիոն հարյուր հազար) ՀՀ դրամ:

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած ծառայության դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 30-ը:

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում ծառայության մատուցման՝ պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով: Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև ծառայությունը սույն պայմանագրով սահմանված ժամկետում մատուցելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

5.3 Պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին

կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

7.2 Պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ծառայության ծավալների կամ ձեռք բերվող ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.6 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել ծառայության օգտագործման պահանջը, իսկ Կատարողի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե ծառայությունների մատուցման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.9 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է

www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Պատվիրատուն այն ուղարկվում է նաև Կատարողի էլեկտրոնային փոստին:

7.10 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.11 Սույն պայմանագիրը կազմված է **14** էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 1.1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.12 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

7.13 Պայմանագրով նախատեսված ծառայությունների մատուցումն իրականացվում է այդ նպատակով ֆինանսական միջոցների առկայության և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան համաձայնագրի կնքման միջոցով: Պայմանագիրը լուծվում է, եթե այն կնքելու օրվան հաջորդող վեց ամսվա ընթացքում այդ նպատակով պայմանագրի կատարման համար ֆինանսական միջոցներ չեն նախատեսվում: Եթե պայմանագրի կատարման համար հատկացված ֆինանսական միջոցների չափը գերազանցում է գնումների բազային միավորի տասնապատիկը, ապա Պատվիրատուի կողմից համաձայնագիր կկնքվի, եթե Կատարողի կողմից տուժանքի ձևով ներկայացված որակավորման և պայմանագրի ապահովումները՝ նախատեսված ֆինանսական միջոցների չափով, փոխարինվում է բանկային երաշխիքով կամ կանխիկ փողով՝ հաշվի առնելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշման N 1 հավելվածի 32-րդ կետի 17-րդ ենթակետի «բ» պարբերության պահանջները: Ընդ որում, Կատարողը համաձայնագիրը կնքում, իսկ տուժանքի ձևով ներկայացված որակավորման և պայմանագրի ապահովումների փոխարինման դեպքում նաև նոր ապահովումները Պատվիրատուին ներկայացնում է համաձայնագիր կնքելու ծանուցումը ստանալու օրվանից տասնհինգ աշխատանքային օրվա ընթացքում: Հակառակ դեպքում պայմանագիրը Պատվիրատուի կողմից միակողմանիորեն լուծվում է:

8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն ք. Երևան Կառավարական տուն 3 ՀՎՀՀ՝ 01506515 ՀՀ ՖՆ գործառնական վարչություն Հ/Հ՝ 900011026052 գլխավոր քարտուղարի պարտականությունները կատարող	«Ինտերորթո» ՍՊԸ ՀՀ.ք Երևան Սեպուհի 7 ՀՎՀՀ՝ 00074171 «Արարատբանկ» ԲԲԸ Հ/Հ՝ 1510031253420100
---------- Ս.Մնացական (ստորագրություն) Կ.Տ.	Տնօրեն ---------- Ա.Պետրոսյան /ստորագրություն/ Կ.Տ

Հավելված N 1
«09» մարտի 2020 թ. կնքված
ԱՍՀՆ-ԳՀԾՁԲ-20/12 ծածկագրով պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

ՀՀ դրամ

Ծառայության							
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	տեխնիկական բնութագիրը	չափման միավորը	ընդհանուր գինը/ՀՀ դրամ	ընդհանուր քանակը	մատուցման	
						հասցեն	ժամկետը
1	51411130/501	Ներկայացվում է ստորև*	դրամ	8 100 000	Պատվիրատուի կողմից ներկայացվող հայտերի հիման վրա	ք.Երևան	Պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո մինչև 25.12.2020թ

**ծառայության մատուցման վերջնաժամկետը չի կարող ավել լինել, քան տվյալ տարվա դեկտեմբերի 25-ը:*

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ*

Վերին և ստորին վերջույթների պրոթեզների, այդ թվում միոպրոթեզների և օրթոպրոթեզների վերանորգման (հիմնական դետալների փոխարինման և տեղադրման) ծառայությունների

Վերանորոգման ծառայություն է համարվում պրոթեզների հիմնական դետալների և նյութերի փոխարինման և տեղադրման մասնագիտական ծառայությունը:

Ստորև նշված չափաբաժիններով ներկայացված ծառայությունների մատուցման ընթացքում օգտագործվող դետալները պետք է համապատասխանեն միջազգային ISO ստանդարտներին և ունենան այդ ստանդարտների համապատասխանության հավաստագիր կամ հայտարարագիր:

Որոշմամբ սահմանված կարգով և դեպքերում վերանորոգման ծառայություններ տրամադրվում են վերին և ստորին վերջույթի պրոթեզ կամ օրթոպրոթեզ կրող անձանց (այսուհետ՝ Շահառու)

Վերին և ստորին վերջույթների պրոթեզների, այդ թվում միոպրոթեզների և օրթոպրոթեզների վերանորոգում (հիմնական դետալների փոխարինում և տեղադրում)		
1) Չափաբաժիններին վերաբերող ընդհանուր պահանջներ, առանձնահատկություններ և այլ պայմաններ		***2)***
Չափաբաժինների տրամադրման պայմանները	1. **Ծառայության տրամադրման ժամկետ՝ աջակցող միջոցը վերանորոգելու համար** դիմելու օրվանից սկսած մինչև տեխնիկական նկարագրում առկա ծառայության տրամադրման առավելագույն ժամկետները, որի ընթացքում կատարվում են անհրաժեշտ քանակի չափափորձարկումներ՝ մինչ ծառայության վերջնական տրամադրումը: Ծառայության տրամադրման ժամկետը կարող է երկարաձգվել այն դեպքում, եթե շահառուն սահմանված ժամկետում չի ներկայանում չափափորձարկման: 2. Վերանորոգումը կատարվում է **Բուժատեխնիկական հանձնաժողովի *համապատասխան եզրակացության հիման վրա (բացառությամբ՝ երաշխիքային ժամկետում գտնվող***	**4.**

	աջակցող միջոցների վերանորոգումից): 3. Ծառայությունը համարվում է մատուցված վերանորոգված աջակցող միջոցը ստանալու հանգամանքը շահառուի կողմից գրավոր հաստատելուց հետո: Ընդ որում, եթե շահառուն հրաժարվում է գրավոր հաստատել վերանորոգված աջակցող միջոցը ստանալու հանգամանքը (համարում է, որ ծառայությունը պատշաճ որակի չէ) ապա նրա դիմումի հիման վրա, վիճահարույց հարցը քննարկվում է Բուժատեխնիկական հանձնաժողովում: Այս դեպքում Բուժատեխնիկական հանձնաժողովը տալիս է եզրակացություն՝ վերանորորոգման ծառայությունը պատշաճ որակի լինելու կամ վերանորորոգման ծառայությունը պատշաճ որակի չլինելու և նոր վերանորոգում իրականացնելու վերաբերյալ: Ոչ պատշաճ որակի ծառայություն է համարվում այն ծառայությունը, որը տրամադրվել է սույն տեխնիկական բնութագրի խախտմամբ, կամ որի պատճառով խախտվել է կամ կարող է խախտվել աջակցող միջոցի ամբողջականությունը, այն կրելու հարմարավետությունը կամ դրա ֆունկցիոնալությունը կամ կարող է վնասել Շահառուի առողջությանը: **3.** Բուժատեխնիկական հանձնաժողովի եզրակացությունը (որոշումը) իրավապարտադիր է:	
Չափաբաժիններին ներկայացվող պահանջները	1. Աջակցող միջոցները վերանորոգվում են չօգտագործված, ISO ստանդարտներին համապատասխանող դետալներով 2. Վերանորոգման արդյունքում ամբողջովին վերականգնվում են պատրաստման պահին աջակցող միջոցի ունեցած չափանիշները, հնարավորությունները և ֆունկցիոնալությունը: 3. Վերանորոգված պարագան պետք է բավարարի շահառուի պահանջներին՝ ☐ անթրոպոմետրիկ տվյալներով ☐ բժշկական ցուցումով ☐ տարիքային առանձնահատկություններով ☐ դիմացկունությամբ և ամրությամբ ☐ ֆունկցիոնալությամբ ☐ հարմարությամբ ☐ էսթետիկ տվյալներով	
Վիճակը	Չօգտագործված, ամբողջությամբ նոր նյութերից և դետալներից	
Երաշխիքային ժամկետ	***Կազմակերպության կողմից երաշխիքային սպասարկում կարող է չիրականացվել, եթե՝*** 1. խախտվել են տրամադրված ծառայության շրջանակներում վերանորոգված աջակցող միջոցի պահպանման ու օգտագործման կանոնները, 2. թերությունն առաջացել է բնականոն մաշվածության հետևանքով: Ընդ որում, բնականոն մաշվածություն համարվում են տրամադրված ծառայության շրջանակներում վերանորոգված աջակցող միջոցի օգտագործման հետևանքները, որոնք երաշխիքային ժամկետում առաջացրել են տեխնիկական վիճակի և արտաքին տեսքի վատթարացում,	

	3. տրամադրված ծառայության շրջանակներում վերանորոգված աջակցող միջոցը օգտագործվել է ոչ անմիջական նշանակությամբ, 4. տրամադրված ծառայության շրջանակներում վերանորոգված աջակցող միջոցի վրա առկա են չլիազորված անձանց կողմից կատարված վերանորոգման հետքեր, 5. թերությունն առաջացել է տրամադրված ծառայության շրջանակներում վերանորոգված աջակցող միջոցի կառուցվածքը կամ սխեման փոխելու հետևանքով, 6. թերությունն առաջացել դժբախտ պատահարների, միտումնավոր կամ անզգույշ կատարած քայլերի կամ անփույթ վերաբերմունքի հետևանքով, 7. տրամադրված ծառայության շրջանակներում վերանորոգված աջակցող միջոցը սպառողին հանձնելուց հետո նրա վրա հայտնաբերվել են մեխանիկական վնասվածքներ՝ խոնավության, բարձր կամ ցածր ջերմաստիճանի, ժանգոտման, թթվային միջավայրի ազդեցության տակ առաջացած վնասվածքներ: Վերը նշված 1-7-րդ դեպքերի համար անձի իր միջոցների հաշվին է իրականացնում վերանորոգումը: **Նշում՝** վերանորոգման ծառայության երաշխիքային ժամկետում առաջացած վիճահարույց դեպքերի վերաբերյալ, քաղաքացու դիմումի հիման վրա, եզրակացություն է ներկայացնում Բուժատեխնիկական հանձնաժողովը, որը իրավապարտադիր է: □ Բուժատեխնիկական հանձնաժողովի կողմից ներկայացված եզրակացության հիման վրա կազմակերպությունը իր միջոցներով կրկին վերանորգում է աջակցող միջոցը (դետալների փոխարինում և տեղադրում) եթե կատարվել է ոչ պատշաճ որակի վերանորոգում (ոչ պատշաճ որակի ծառայություն է համարվում այն ծառայությունը, որի պատճառով խախտվել է կամ կարող է խախտվել պրոթեզի ամբողջականությունը, այն կրելու հարմարավետությունը կամ դրա ֆունկցիոնալությունը կամ կարող է վնասել Շահառուի առողջությանը: □ Բուժատեխնիկական հանձնաժողովի եզրակացության հիման վրա ՀՀ պետական բյուջեի կամ օրենքով չարգելված միջոցների հաշվին կարող է իրականացվել նոր վերանորոգում. եթե դրա անհրաժեշտություն է առաջացել Շահառու ֆիզիոլոգիական փոփոխությունների հետևանքով:	
Անվտանգությունը	Շահառուի օրգանիզմի համար անվտանգ: Օգտագործվող նյութերը պետք է բավարարեն շահառուի հիգիենիկ և ֆիզիկական պահանջներին՝ հաշվի առնելով նրա հիմնական և ուղեկցող հիվանդությունների բնույթը: Եթե Շահառուի մոտ առաջացել է որևէ առողջական խնդիր կապված անդամահատված ծայրատի հետ, վերանորոգման վերաբերյալ բուժատեխնիկական հանձնաժողովի	

	համապատասխան եզրակացությունը ստանալուց հետո, ապա վերանրոգող կազմակերպության մասնագետները կարող են Շահառուին հայտնել այդ հիմքով նրան վերանորոգման ծառայությունը չտրամադրելու նպատակահարմարության վերաբերյալ և խորհուրդ տալ դիմել բժշկական հաստատություն կամ Բուժատեխնիկական հանձնաժողովի վերականգնողաբաններին: Շահառուն ստորագրում է, որ տեղեկացված է ծառայության տրամադրման ոչ նպատակահարմար լինելու վերաբերյալ և իր ցանկությամբ կարող է ստանալ այդ ծառայությունը:	

2) Տեխնիկական նկարագրություն

N	ՎԵՐԱՆՈՐՈԳՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԱՆՎԱՆՈՒՄԸ	ՉԱՓԻ ՄԻԱՎՈՐԸ ՔԱՆԱԿԸ	ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ԱՌԱՎԵԼԱԳՈՒՅՆ ԺԱՄԿԵՏԸ (օրացուցային)	ՆՎԱԶԱԳՈՒՅՆ ԵՐԱՇԽԻՔԸ (ամիս)	մեկ միավորի արժեքը /ՀՀ դրամ/
1	Կոնքազդրի էկզար. պրոթեզի ծայրատի փոխարինում	Հատ/1	15	12	163000
2	Ծնկա-հոդի էկզարտ. պրոթեզի ծայրատի փոխարինում և տեղադրում	Հատ/ 1	15	12	158000
3	Ազդրի պրոթեզի կոսմետիկայի փոխարինում և տեղադրում	Հատ/1	5	12	60000
4	Ազդրի պրոթեզի ծայրատի փոխարինում և տեղադրում	Հատ/1	15	12	136000
5	Ազդրի պրոթեզի ծնկի փոխարինում և տեղադրում	Հատ/1	5	12	225000
6	Ազդրի պրոթեզի կաշվե ծայրատի փոխարինում և տեղադրում	Հատ/1	10	12	36000
7	Աղդրի պրոթեզը գոտկատեղին ֆիքսող էլաստիկ գոտկա-ազդրային աղեկապի փոխարինում և տեղադրում	Հատ/1	1	12	62000
8	Ազդրի պրոթեզի ծայրատի ընդունիչի սուռլինե ներդիրի (ISNI) փոխարինում և տեղադրում	Հատ/1	5	12	70000
9	Ազդրի պրոթեզի ծայրատի ընդունիչի և սուռլինե ներդիրի (ISNI) փոխարինում և տեղադրում	Հատ/1	15	12	183000
10	Ազդրի պրոթեզի սիլիոնե լայների փոխարինում և տեղադրում	Հատ/1	15	12	605000
11	Ազդրի կաշվից պրոթեզի շինաների փոխարինում և տեղադրում	Հատ/1	10	12	60000
12	Սրունքի պրոթեզի սիլիկոնե լայների փոխարինում և տեղադրում	Հատ/1	15	12	383000
13	Սրունքի պրոթեզի ծայրատի կաշվի փոխարինում և տեղադրում	Հատ/1	10	12	30000
14	Սրունքի մոդուլյար պրոթեզի ծայրատի փոխարինում և	Հատ/1	15	12	81000

	տեղադրում				
15	Սրունքի պրոթեզի ծայրատի փոխարինում և տեղադրում	Հատ/1	15	12	130000
16	Սրունքի պրոթեզի փափուկ ծայրատի փոխարինում և տեղադրում	Հատ/1	5	12	15500
17	Սրունքի պրոթեզի մանժեթի փոխարինում և տեղադրում	Հատ/1	10	12	89000
18	Սրունքի պրոթեզի մանժեթի և շինայի փոխարինում և տեղադրում	Հատ/1	15	12	180000
19	Սրունքի պրոթեզի կոսմետիկայի փոխարինում և տեղադրում	Հատ/1	5	12	27000
20	Ստորին վերջույթի պրոթեզի ծնկակալի փոխարինում և տեղադրում	Հատ/1	1	12	15500
21	Ստորին վերջույթի բոլոր տեսակի պրոթեզների թաթի փոխարինում	Հատ/1	2	12	50000
22	Ստորին վերջույթի բոլոր տեսակի պրոթեզների փոքր վերանորոգում	Հատ/1	2	12	3000
23	Վերին վերջույթի պրոթեզների կոսմետիկ դաստակի փոխարինում և տեղադրում	Հատ/1	5	12	83000
24	Վերին վերջույթի ձգողական պրոթեզների դաստակի փոխարինում և տեղադրում	Հատ/1	5	12	164000
25	Արմնկային հոդի փոխարինում և տեղադրում	Հատ/1	5	12	155000
26	Նախաբազուկի ամրագոտիների փոխարինում և տեղադրում	Հատ/1	5	12	71000
27	Բազուկի ամրագոտիների փոխարինում և տեղադրում	Հատ/1	5	12	84000
28	Վերին վերջույթի պրոթեզի կոսմետիկ ձեռնոցի փոխարինում և տեղադրում	Հատ/1	5	12	61000
29	Ձգողական արմնկային հոդի փոխարինում	Հատ/1	10	12	250000
30	Միոպրոթեզի մարտկոցի փոխում և տեղադրում	Հատ/1	1	12	30000
31	Միոպրոթեզի սենսորային տվիչների փոխում և տեղադրում	Հատ/1	2	18	30000
32	Միոպրոթեզի դաստակի փոխում և տեղադրում	Հատ/1	10	18	290000
33	Սրունքի և ազդրի պրոթեզների կապիչների և գոտիների փոխում և տեղադրում	Հատ/1	2	12	18000
34	Վակում կլապանի և տրուբկայի փոխարինում և տեղադրում	Հատ/1	2	12	13000

35	Բոլոր տեսակի օրթոպրոթեզների ոտնաթաթի փոխարինում և տեղադրում	Հատ/1	2	12	51000
36	Սրունքի օրթոպրոթեզի ծայրատի փոխում և տեղադրում	Հատ/1	15	12	94000
37	Ազդրի օրթոպրոթեզի ծայրատի փոխում և տեղադրում	Հատ/1	15	12	110000
38	Սրունքի օրթոպրոթեզի կաշվե ծայրատի փոխարինում և տեղադրում	Հատ/1	15	12	45000
39	Ազդրի օրթոպրոթեզի կաշվի ծայրատի փոխարինում և տեղադրում	Հատ/1	15	12	67000
40	Բոլոր տեսակի կաշվե օրթոպրոթեզների աստառի փոխարինում և տեղադրում	Հատ/1	5	12	14000
41	Բոլոր տեսակի օրթոպրոթեզների կապիչների փոխարինում և տեղադրում	Հատ/1	2	12	10000
42	Սրունքի օրթոպրոթեզի փափուկ ծայրատի փոխում և տեղադրում	Հատ/1	5	12	11000
43	Ազդրի օրթոպրոթեզի փափուկ ծայրատի փոխում և տեղադրում	Հատ/1	2	12	15000
44	Ազդրի օրթոպրոթեզի կոսմետիկայի փոխում և տեղադրում	Հատ/1	5	12	50000
45	Սրունքի և ազդրի կաշվե պրոթեզների սրունք-թաթային հոդի փոխում	Հատ/1	2	12	12000
46	Սրունքի և ազդրի կաշվե պրոթեզների փայտյա կոճի (շիկոլոդկայի) փոխում	Հատ/1	2	12	22000

Ծառայություն մատուցող կազմակերպությունը պարտավոր է՝

1. Ծառայություն ստացած յուրաքանչյուր անձի համար լրացնել անձնական քարտ (էլեկտրոնային կամ թղթային եղանակով)՝ համաձայն ՀՀ կառավարության 2015 թվականի սեպտեմբերի 10-ի N 1035-Ն որոշման N 1 հավելվածի 39-42-րդ կետերի՝ **պատվիրատուից ստացած ձևաչափով:**

2. Նախարարության պահանջի դեպքում տրամադրել ծառայություններ ստացած անձանց անձնական գործերը:

3. Իրեն դիմած շահառուին տրամադրել պատվիրատուի հետ նախապես համաձայնեցված գրավոր տեղեկատվություն-հուշաթերթիկ մատուցված ծառայության, հիմնական տեխնիկական բնութագրերի, երաշխիքային սպասարկման, պահպանման ու օգտագործման կանոնների, հերթական տրամադրման ժամկետի վերաբերյալ: Շահառուն հուշաթերթիկն ստանալու փաստը հավաստիացնում է անձնական քարտում ստորագրելով:

4. Ունենալ պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարման համար պահանջվող՝

1) մասնագիտական գործունեություն, որը ենթադրում է պրոթեզների պատրաստման և/կամ վերանորգման առնվազն մեկ տարվա փորձառություն

2) Անհրաժեշտ տեխնիկական միջոցներ՝ վերին և ստորին վերջույթների պրոթեզների և օրթոպրոթեզների վերանորոգման համար, ինչպես նաև համակարգչային տեխնիկա /համակարգիչ, սկաներ, տպիչ սարք և այլն/ և ծառայությունների տրամադրման համար անհրաժեշտ այլ օժանդակ միջոցներ.

3) Համապատասխան շենքային պայմաններ՝ ծառայության մատուցման լիարժեք կազմակերպման համար, մասնավորապես՝

- Մետաղամշակման արհեստանոց

- Փայտամշակման արհեստանոց
- Լամինացիայի արհեստանոց
- Գիպսի հետ աշխատելու սենյակ
- Ծառայության մատուցման համար չափագրման և չափափորձարկման սենյակ, որը, ի թիվ այլ անհրաժեշտ պարագաների պետք է կահավորված լինի հատուկ քայլուղի և քայլելու մարզասարք

4) ֆինանսական միջոցներ՝ առանց կանխավճար ծառայություն մատուցելու համար:

5) աշխատանքային ռեսուրսներ՝ վերին և ստորին վերջույթների պրոթեզների և օրթոպրոթեզների վերանորգման համար պրոթեզ և օրթոպրոթեզ պատրաստելու առնվազն մեկ տարվա մասնագիտական փորձառություն ունեցող կամ մասնագիտական վերապատրաստում անցած մասնագետներ,

5. Տեղաշարժման դժվարություն ունեցող անձանց սպասարկումն իրականացնելու համար մատչելի շենքային պայմաններ (համաձայն ՀՀ քաղաքաշինական նորմերին), ներառյալ անարգել մուտք կազմակերպության շենք և սպասարկման սրահ՝ մուտքի զրոյական մակարդակ կամ Հայաստանի Հանարպետության քաղաքաշինական նորմերի համապատասխան կառուցված թեքահարթակ, իսկ դրանց անհնարինության դեպքում համապատասխան անվտանգ տեխնիկական սարքավորումներ՝ վերելակ, բարձրացնող մեխանիզմներ և սպասարկման սրահում տեղաշարժվելու համար խոչընդոտների բացակայություն.

6. Ծառայություն մատուցելուց հետո՝ նույն օրը, ծառայություն ստացած անձանց տվյալները (ներառյալ հեռախոսահամար) մուտքագրել «Պրոթեզաօրթոպեդիկ և վերականգնողական պարագաների տրամադրման տեղեկատվական համակարգ»: Արտագնա այցելությունների ժամանակ մարզերում մատուցած ծառայության վերաբերյալ Համակարգ մուտքագրումները կարող են իրականացվել արտագնա այցելությունների ավարտից հետո 2 օրվա ընթացքում՝ անձնական քարտում նշելով մարզից վերադառնալու և պրոթեզի փաստացի տրամադրման օրը:

7. Յուրաքանչյուր եռամսյակ նախարարություն ներկայացնել նախորդ եռամսյակում տրամադրված վերանորոգման ծառայության ընթացքում ***փոխարինված*** դետալների ներմուծման կամ գնման փաստաթղթերը:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն ք. Երևան Կառավարական տուն 3 ՀՎՀՀ՝ 01506515 ՀՀ ՖՆ գործառնական վարչություն Հ/Հ՝ 900011026052 գլխավոր քարտուղարի պարտականությունները կատարող	«Ինտերօրթո» ՍՊԸ ՀՀ.ք Երևան Սեպուհի 7 ՀՎՀՀ՝ 00074171 «Արարատբանկ» ԲԲԸ Հ/Հ՝ 1510031253420100
---------- Ս. Մաչյան (ստորագրություն) Կ.Տ.	Տնօրեն ---------- Ա.Պետրոսյան /ստորագրություն/ Կ.Տ.

Հավելված N 2
«09» մարտի 2020 թ. կնքված
ԱՍՀՆ-ԳՀՇՁԲ-20/12 ծածկագրով պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ծառայության															
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2020թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում												
			հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
1	51411130/501	Վերին և ստորին վերջույթների պրոթեզների վերանորոգման ծառայություններ	⋮	⋮	⋮	⋮	⋮	⋮	⋮	⋮	⋮	⋮	⋮	⋮	⋮

** Վճարման ենթակա գումարները ներկայացվում են աճողական կարգով:*
*** հրավերում գումարները նշվում են տոկոսով, իսկ պայմանագիրը կնքելիս տոկոսի փոխարեն նշվում է կոնկրետ գումարի չափ*

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի
նախարարություն
ք. Երևան Կառավարական տուն 3
ՀՎՀՀ՝ 01506515
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
Հ/Հ՝ 900011026052
գլխավոր քարտուղարի
պարտականությունները կատարող

---------- Ս. Սաֆարյան
(ստորագրություն)
L.S

ԿԱՏԱՐՈՂ

«Ինտերօրթո» ՍՊԸ
ՀՀ.ք Երևան Սեպուհի 7
ՀՎՀՀ՝ 00074171
«Արարատբանկ» ԲԲԸ
Հ/Հ՝ 1510031253420100

Տնօրեն ---------- Ա.Պետրոսյան
/ստորագրություն/
Կ.S

Հավելված 3
«09» մարտի 2020 թ. կնքված
ԱՍՀՆ-ԳՀԾՁԲ-20/12 ծածկագրով պայմանագրի

Պայմանագրի կողմ	Պատվիրատու
_____	_____
_____	_____
գտնվելու վայրը _____	գտնվելու վայրը _____
հհ _____	հհ_____
հվհհ _____	հվհհ_____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝
_____

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 20 թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատուցել է հետևյալ ծառայությունները՝

N	Մատուցված ծառայությունների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ծառայությունը հանձնեց	Ծառայությունն ընդունեց
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված 3.1
« 09 » մարտի 2020 թ. կնքված
ԱՍՀՆ-ԳՀԾՁԲ-20/12 ծածկագրով պայմանագրի

ԱԿՏ N

պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____-ի (այսուհետ՝ Պատվիրատու) և _____-ի
Պատվիրատուի անունը Կատարողի անունը

(այսուհետ՝ Կատարող) միջև 20 թ. _____ -ին կնքված N _____
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը

գնման պայմանագրի շրջանակներում Կատարողը 20 թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված ծառայությունները.

Ծառայության		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն